

ՄԱԿԱՐ ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆԻ «ՔՆՆԱՂԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱՂԱՏՈՒԹԵԱՆՑ»-Ը\*

Զինափղա Բալայան

**Բանալի բառեր` 1886թ.,** գրաբար, աշխարհաբար, գրախոսություններ, «Գաղտնիք Ղարաբաղի», պատմական ուսումնասիրություն, Լեո, «Վէ՞պ թէ պատմություն», հերմենետիկ, աքսիոլոգիական:

*«Քննադատություն քննադատութեանց».* Մակար Վ.Բարխուբարեանց» (1888 Տփլիս) տիտղոսաթերթով աղբյուրագիտական արժեք ներկայացնող աշխատությունը գրվել է ի պատասխան Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» (1886, Սանկտ Պետերբուրգ) պատմության շուրջ ստեղծված պոլեմիկայի-բանակռիվների եւ Լեոյի «Վէ՞պ թէ պատմություն» գրքի մեկնումների:

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի գնահատման տեսակետից ուշագրավ է թե՛ Հայկունու (Հովակիմ Գեղամյանց) «Ուղեգնացական ակնարկներում» ամփոփված նյութը, որտեղ հեղինակը «Գաղտնիքը» համարում է մի «անգին պատմական գիտ» եւ թե՛ Մ. Բարխուդարյանի «Քննադատություն քննադատութեանց»-ը, որը մի հետաքրքիր-փաստական պատասխան է՝ գրված Լեոյի «Վէ՞պ թէ պատմություն» քննաբանության առթիվ:

Բայց մինչեւ Լեոյի ուսումնասիրության խորքերը քննելը՝ կարելի էր մեկ այլ աղբյուրագիտական արժեք ներկայացնող աշխատություն, որի տիտղոսաթերթն ունի հետևյալ վերտառությունը՝ «Քննադատություն քննադատութեանց». Մակար Վ.Բարխուբարեանց»:

Հարկավ, քննախոսությունը կարելի է եթե ոչ միակ, ապա քիչ եղածներից ճշգրիտ աղբյուրն ընդունել «Գաղտնիքի» շուրջ ծագած պոլեմիկայի տեսանկյունից, որտեղ Մ. Բարխուդարյանը, հետևելով Լեոյի փաստարկումներին, նրա կողմից ներկայացված թե՛ պատմական, թե՛ իմացաբանական, թե՛ լեզվական այսպես ասած մեղադրանքներին, ցույց է տալիս դրանց անհիմն, միտումնավոր լինելը:

Մ. Բարխուդարյանը ցավ է հայտնում, որ ամեն ոք ու շուրջբոլոր երեսույթներն ու դրանց ներկայացնող անձինք դարձել են քննադատ ու քննամիտ, այդ այն դեպքում, երբ «Տակաւին պատմութիւն չուսանողն համարձակ քննադատում է պատմութիւններ. դեռ իւր մայրենի լեզուն ուսմամբ չկատարելագործողն վստաւորէն քննադատ է հանդիսանում լեզուաբանական խնդրոց. դեռ իւր ծննդեան երկրի աշխարհագրական տեղերը չիմացողն յանդգնում է քննաբանել աշխարհագրական դիրքեր. տակաւին նոր շինութիւնները չիմաստասիրողն ծանոնում է հնագէտ. տակաւին իւր կարդացածի պարզ միտքը չըմբռնողն ձգտում է քննադատել քաղաքական խնդիրներ...»[1]:

Հեղինակն ախտամոլություն է համարում ստեղծված գրականական իրավիճակը, ուր հարգի չէ մատենագրությունը, ինչպես մնացած ազգերի մեջ:

Այդ ամենը հետևանք է համարում Հայ մամուլի թողտվության, որը «փոխանակ զսպելու և յուղղութիւն հրաւիրելու այդպիսիները, բազմացնում է այդպիսեաց թիւը, ասպարէզ տալով... հռչակելով նոցա թիւր գրածները, իսկ խեղդելով-չիրատարակելով-դատապարտում է լռութեան նոցա դէմը գրողների արդար և իրաւացի ծայները»[2]:

\* Հոդվածն ընդունվել է 13.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

Այսպիսով՝ մեկնաբանը ցույց է տալիս հեղինակ-ընթերցող հարաբերության ոչ ճիշտ պատկերը. «Վերջապէս փոխանակ յառաջ մղելու և զարկ տալու Հայ գրականութեան, այսպիսով յետ է նահանջում այն: Վատաբանում են վատ հեղինակութեանց հետ և լաւ ու ընտիրներն և վնասում են միևնոյն ժամանակ ընթերցանութիւնն և տպագրութիւնն» [3]:

Մ. Բարխուդարյանը միաժամանակ տարբերակում է օգտակար եւ անօգտակար քննադատական դիտողությունները՝ ընդգծելով դրանց էական հատկանիշները, հետապնդած նպատակները: Հետեւենք մեկնաբանին, քանզի այնտեղ երեւում են հայ քննադատության, հայ մամուլի, հայ գրականության, հայ մշակի դեմքը, խառնվածքային գծերը, պոլեմիկական կամ ճշմարիտ նպատակաուղղվածությունը, որոնք լույս են սփռում «Գաղտնիքի» շուրջ ծագած անբարյացակամ մթնոլորտի վրա. «Օգտակար են քննադատություններն, որք յառաջանում են իւրաքանչիւր մասնաճիւղը կատարելագործող անծինքներից, որք ծագում են անաչառ նպատակից և հասուն հմտութիւնից, որոց մէջ խօսում են անհերքելի փաստերն, որոց մէջ փայլում են քննադատի քաղցր լեզուն, համեստ ոճն և ազնիւ ձևերն ու դարձուածներն: Օգտակար են յաւէտ այդպիսի քննադատութիւններն, վասն զի ծառայում են հասարակաց օգտին, ուղղում են հեղինակաց և թարգմանչաց սխալներն և թերութիւններն եթէ կան. և երկրորդ տպագրութեան ժամանակ ամբողջանում են եղած պակասութիւններն»: Միանգամայն ճիշտ քննություն են հետետւթյուն: Հեղինակը խոսում է նաեւ միտումնավոր կերպով տարվող քննադատական խոսքի կործանարար բնույթի շուրջ, «որք ծագում են չար նախանծից և չկամութիւնից, որոց մէջ խոսում են կարծիքներն ....կարկատած փաստերն, որոց մէջ շողշողում են... թշնամական ոգին և շպարեալ ճամարտակութիւնն և որոց մէջ փայլում են քննադատների դառն լեզուն, կծու ոճն, հեզնական ձևերն, ծաղրական դարձուածներն և յարձակողական կիրքն:- Տեսաբանը, դառնացած անթիվ անհարկի վիրավորանքներից՝ շարունակում է,- Բոլորովին անպէտք են այսպիսի քննադատութիւններն, որովհետև շարժում են հմուտների ծաղրը, հեղինակաց և թարգմանչաց արհամարհանքը, զարգացեալ ընթերցողաց զգուանքը, սակայն հիացնում, զարմացնում և շլացնում են պարզամիտները...»[4]:

Թե՛ Րաֆֆու, թե՛ Լեոյի գործադրած լեզուն եւ ոճը կտրուկ ու խիստ էին, հաճախ՝ անհարկի, մերժողական: Մ. Բարխուդարյանը, թվարկելով կործանարար քննադատության հետամտած նպատակները, ընդգծում է. «Վերջին տեսակիս է վերաբերում և ա. Լէօ-ի «Վէ՞պ թէ պատմութիւն» քննադատութիւնն»[5]:

Մեկնաբանը հակված է ցույց տալու Լեոյի կողմից արված սուր փաստարկները եւ չնայած գտնում է, որ չարժեք պատասխանել նրան, սակայն վիրավորված պատվի եւ շոշափված վարքի խնդիրն իրեն դրդեց քննել Լեոյի «Վէ՞պ թէ պատմութիւն» գիրքը:

Հետաքրքիր մեկնողական դաշտ է բացվում, եւ երկկողմանի արված քննադատում բախվում են դիրքորոշումներ, պատմական տեսակետներ, մտքի վերլուծողական երկու ծիրք, երկը համակողմանի քննելու, զնահատման չափանիշ նախանշելու հետաքրքիր դիտույթներ Հայաստանի, Հայոց Արեւելից կողմանց՝ Արցախի պատմաաշխարհագրական, քաղաքական, ազգագրական, էթնիկ, տոհմաբանական, գրական նկարագրի վերհանման ուղղությամբ:

Եթե «Գաղտնիքի» թարգմանիչը գրքի առաջաբանում հմուտ պատմաբաններին էր թողել վերհանելու գրքի հետապնդած խնդիրները, դերը, ժանրը, պատմական արժեքները, ապա տեսաքննական այս գրքում փաստում է, որ այն ոչ թե պատմության մասնաճյուղն ուսումնասիրած անձն է քննության վերցրել, այլ «անհմուտ մարդը» [6]:

Եվ այսպես, մեկ առ մեկ անդրադառնալով Լեոյի դիտողություններին, Բարխուդարյանը դրան հակադրում է իրական փաստարկներ՝ հիմնավորելով «Գաղտնիքի» պատմագիտական արժեքը:

Մ. Բարխուդարյանը հերքում է Լեոյի այն փաստարկները, թե «Արցախը չի տուել մի մեծագոյն իշխան» եւ այլն՝ ցույց տալով Լեոյի թե՛ պատմական, թե՛ լեզվական սխալները: «Արցախն մէն մի դարում տուել է «մեծագործ իշխաններ և քաջարի զորագունդեր»: Միւնեաց Անդոկ իշխանն ո՞ր գնդով կողոպտեց Ռոմիզդէան Շապուհ արքայի գանձը: Ո՞ր գնդով պատերազմեց Վաչագան Գ-ն Պարսից ահարկու զօրութեան դէմ: Արցախեցի չէի՞ն Ջալալեան իշխաններն, որք կառուցին Գանձասարի մեծագործ և հրաշալի վանքը և ըստ կարելոյն կռուեցին Թաթարաց սուկալի ուժերի հետ: Արցախեցի չէի՞ն Հայ մելիքներն և իւրեանց զօրագունդերն, որք քաջօրէն պաշտպանում էին իւրեանց սուրբ հայրենիքի ազատութիւնը և անկախութիւնը՝ մաքառելով ժամանակի հոսանաց անդինադրելի բռնութեանց դէմ...»[7]:

Մ.Բարխուդարյանը թվարկում է ժամանակների թոհուրոհում ճակատած ու հաղթանակած, մարտիրոսված Արցախի քաջագուն մելիքներին, հոգեւորականներին, պատմագիրներին, երեսելի կաթողիկոսներին, Կաղանկատվացու, Եսայի կաթողիկոսի, Հովհաննես Սարկավագի, Վարդանի, Վանականի եւ այլ պատմիչների անունները, իմաստասերների, զորավարների խնկելի անունները, ապա թվարկելով՝ նշում է Արցախի քաղաքների, մայրաքաղաքի եւ նշանավոր երեսույթների պատմությունները [8]:

Ուսումնասիրության 11-րդ էջում քննաբանը ցույց է տալիս, որ ռուսահայոց մամուլի կեսը հրատարակել է «Գաղտնիքի» դեմ գրված բոլոր հոդվածները եւ ոչ մի հատվերջինիս օգտին գրածներից. «Իրաւաբանութիւնն երբէք ընդունած չէ և չէ ընդունում միակողմանի եզրակացութիւնը, որովհետև միակողմանի եզրակացութիւնն արտադրում է միակողմանի արտադրութիւնն»[9]:

Հեղինակը ցույց է տալիս, թե մամուլի օրգաններից որոնք են լռել, խոսել, թերագնահատել կամ գնահատել «Գաղտնիքը» եւ կամ լռեցվել [10]:

Նա քննում է Լեոյի նշած «Մեր մամուլ» հարաբերությունը՝ մեկնելով վերջինիս սխալ բացատրությունները:

Լեոն հեզնել է նաեւ «Գաղտնիքի» հեղինակի քերականության «անգիտությունը»՝ գտնելով, որ «այդպիսի գիտութեամբ մի մարդ (այն էլ այն ժամանակները) Եղիշէ լինել չէր կարող...» կամ «Մակար վարդապետը... Եղիշէի ոճը չէր հասկանում»[11]:

Լեոն պախարակելի է համարում նաեւ, թե ինչու Բարխուդարյանը մելիքների նամակները եւս իրենց սկզբնապես գրված ոճով չի թողել. «Պատմութեան նիւթերը իրանց իսկական դէմքով ներկայացնելը ամենքի պարտականութիւնն է: Գրականութեան համար գուցէ այնքան հետաքրքիր չը լինէր այդ նամակների բովանդակութիւնը, որքան ուճը, լեզուն: Իսկական նամակներից կարող էր օգուտ քաղել համ պատմութիւնը, համ լեզուագիտութիւնը, համ ժողովրդագրութիւնը:

Հոգ չէ, եթէ շատերը չէին հասկանալ Ղարաբաղի լեզուն...Բայց գուցէ Մակար վարդապետը երեսակայել է թէ «Գաղտնիքը» Ղարաբաղի վերջացրած անվիճելի պատմութիւնն է, ուստի այս կերպով է վարուել (թարգմանել է աշխարհաբար) այդ խիստ հետաքրքիր նամակների հետ»[12]:

Մ. Բարխուդարյանը, Լեոյի հեզնական ոճին ի պատասխան, գրում է. «Յայտնի է և այն, որ Ապրէսն, իւր հօր մահից յետոյ, միայնակ գրած է միայն «Գաղտնիքի» ԾԼ., ԾԹ և Կ. գլուխները: Ապա ուրեմն հեղինակից գրուած՝ այս երեք գլուխներն միայն ունէին Եղիշէի նման գեղեցիկ ոճ: Պատճառն այն է որ, ինչպէս ասում է հեղինակն, ինքն յաճախ կարդացած է Եղիշէն: Սակայն, ինչպէս յայտնի է շատերին, Ապրէսն կարող էր ունենալ

Եղիշէի ոճի նման գեղեցիկ ոճ, բայց ունենալ և տառախախտներ: Իսկ Աբրահամն կարող էր լինել անսխալ սրբագրող և չունենալ Եղիշէի սահուն և սրտագրաւ ոճը»[13]:

Թարգմանիչն ինչպես գրքի առաջաբանում, նույնպես եւ հիմա հաստատում է գրքի թարգմանության պատճառները. «հարկ էր գրքի երկու չափով ծանօթութիւններ աւելացնել՝ Ղարաբաղի գաւառական, բազմաց անմարտելի, բառերը բացատրելու համար: Ով կարդացած է «Արագը տարին կտարի» (և «Պըլը-Պուղի») գիրքը՝ նա լիովին կը համոզուի, որ Ղարաբաղի գեղջկական բարբառով և ոճով գրուածներն անմարտելի կերակուրներ են ոչ միայն Ղարաբաղի Հայ հասարակութեան, այլ և նոյն իսկ գիտնոց»:

Թարգմանիչը նորից հիշեցնում է «Գաղտնիքի» հեղինակի խնդիրքը. «Ղուք նախ դորա լեզուն աշխարհաբար փոխեցէ՛ք և ապա հրատարակել տուէ՛ք, որպէս զի դիրըմբընելի լինին դորա իմաստներն Հայ հասարակութեան: Հիմի գրականական լեզուն աշխարհաբարն է և ոչ թէ գրաբարն, որ շատերին անհասկանալի է»[14]:

Լեոն թուլացնում է մելիքների գործունեությունը, քաջությունը, քաղաքական նկրտումները՝ ասելով. «Մելիքները այնքան մեծ և զօրեղ մարմիններ չէին» [15]:

Իսկ «Գաղտնիքի» թարգմանիչը թե՛ մելիքների եւ թե՛ հոգեւոր այրերի վարած զգույշ եւ քաղաքական, հայրենասիրական վարքի ու կատարած մեծ գործերի մասին պատմում է Ղարաբաղի խարդախ խան կոչեցյալների՝ Փանահի, Իբրահիմի, Մեհտի Ղուլիի չարագործություններին զուգահեռ՝ գծելով Արցախի քաղաքական նկարագիրը նախնի ժամանակներից մինչեւ XIX դարը[16]:

Հերքելով Լեոյին յուր ենթադրությունների մեջ, հաստատելով, որ յուրաքանչյուր արցախցի զինվոր կարող է կռվել թշնամու մեծաքանակ (100-500) զորաց դեմ եւ մնալ կենդանի՝ թարգմանիչը արժեւորում է արցախցի կռվող զինվորի հայրենասիրական հատկությունները՝ գտնելով, որ դրանք ոչ թե առասպելական թվեր, արարքներ են, այլ իրական դեպքեր. «Պատմութիւններն վկայում են, որ ականաւոր յաղթութիւններն և դիւցազնական քաջագործութիւններն, չարաչար յաղթուիլն և բազմաթիւ կոտորուածներն միշտ կախուած չեն զօրքի բազմութիւնից կամ սակաւութիւնից, այլ ուժի զօրութիւնից, սրտի աներկիւղութիւնից, բանակավայրի նպաստարար դիրքից, փորձառու հմտութիւնից, համամիտ և համակամ միաբանութիւնից և վստահ յարձակումից, իսկ ընդհակառակն ներհակ հանգամանքներից»[17]:

Մ. Բարխուդարյանը, ընթերցողին ճիշտ ուղղություն տալու համար հետամտելով խնդրի պարզեցմանը, մեջբերում է հատկաձ Չամչյանից, որտեղ երեւում են վերջինիս կողմից տրված, հերքելի ներկայացված պատմական անձնությունները. «Այսպիսի յաղթութեան գործս (Ղաւիթ-բէկի) լուեալ և այլոց հայոց՝ որք բնակէին յայլևայլ գաւառս, ի Գողթն, ի Զահուկ, ի Կենաւուզ և յայլ տեղիս աշխարհին Սիւնեաց և Արցախայ, գային առ Ղաւիթ ի զօրաւորագունիցն, միաբանէին ընդ նմա. և եղև թիւ զօրաց նորա երկու հազար: Եկն առ նա Թորոս իշխան Չավնդուրայ՝ յերկրին Արցախու»(Հատոր Գ, եր. 786)»:

Մեկնաբանը, հերքելով Չամչյանին, գտնելով, որ «Չավնդուրը» Արցախում լինել չի կարող, ուստի «ոչ եթէ Արցախեցի հայ քաջերն միացած են Ղաւիթ-բէկի թշնամեաց հետ, այլ Պէրկիշատի հայերն, որ ի ստորև»:

Փա՛ռք և պատիւ՝ պ. քննադատին, որ այդպիսի թիրիմացութեամբ մրոտում է իւր պապերի քաջութեամբ փայլած անունները և նոցա անաղարտ պահուած պատիւները: Տեսէ՛ք թէ Արցախի տղամարդոց քաջութեան մասին ինչ է պատմում Սրապիօն-պապին Եաղուր-խանին. «Ղաւիթ-բէկի զօրանալն երբ հռչակուեցաւ.... Փոքր- Սիւնեաց աշխարհէն լեւս քաջ մարդիկ եկին միաւորեցան նորա հետ»(1877-ի «Արարատ», եր. 413) [18]:

Իսկ երիտասարդ Լեոն, որը հետագայում նաեւ հպարտությամբ կխոսի յուր հայրենակիցների զորավարական, զինական արվեստի փայլատալումների մասին, այդմ ա-

սում է. «Իսկ թէ որքան զարգացած էր Ղարաբաղի մելիքների և առհասարակ ժողովրդի մէջ ազգասիրական ոգին, այդ կարելի է իմանալ մի տխուր փաստից, որ յիշում է 2ամչեանը (Հատ. Գ, եր. 793) [19]: Խոսքը վերոդիտվածին է վերաբերում:

Ինչպէս Լեոն, նույնպէս եւ առաջուց Րաֆֆին էր մերկապարանոց ծաղրում «Գաղտնիքում» գործող «հրեշնաման» հերոսներին ու նրանց առասպելախառն արարքները, սակայն թարգմանիչը հայոց պատմիչների պատմություններից համանման դեպքեր է ներկայացնում՝ քննելով փորձությունների ենթարկված քաջակորով հերոսներին, հիշեցնելով Լեոյին Հայկ Դյուցազնի, Պապ արքայի, Մուշեղ սպարապետի, Վահան Մամիկոնյանի, Միսականի Վասակ իշխանի, Աշոտ Բագրատունու, Դավիթ Կյուրապաղատի, Թորոս Լեւոնի, Արամ Հայկազնի եւ այլ անզուգական հերոսների սխրանքը ու խնածախցի եւ բալլուջեցի քաջերի հերոսական քաջագործությունները [20]:

«Վերոդրեալ պատմական փաստերն ապացուցանում են, որ խնածախցի և Պալլուջեցի քաջերի, մարդ գլուխ 55 պարսիկ սպանելն ոչ եթէ «գեղեցիկ առասպել» է, այլ գեղեցիկ տղամարդութիւն և սքանչելի քաջագործութիւն» [21],- գրում է թարգմանիչը:

Քննաբանը հերքում է Լեոյին այն հարցում, ըստ որի՝ Քեդիսուդա խաչատուրը «ի՞նչպէս կարողացաւ նախագահել ժողովին և խօսել քաղաքական խնդրոց վերայ, մինչդէռ այդ Բարխուտարեանցն իւր նամակները անգամ գրել էր տալիս այլոց» [22]:

Քննաբանն ասում է. «Քաղաքագիտութիւնն սեպիական ծիրք կամ առանձնայատկութիւն չէ միայն քաղաքացիներին, գրագէտներին, ուսեալներին և փիլիսոփաներին, այլ և խելացի գիւղացիներին, բազմամեայ փորձառուներին, անուս, բայց տաղանդաւոր լեռնականներին, անգրագէտ, բայց բնատուր անձնաւորութեանց:

Կարո՞ղ է հաստատուիլ, որ աշխարհիս վերայ պատերազմ սկսուած օրից մինչև գրականութեան և ուսման հասնիլն կամ թէ կառավարութիւններ հաստատուելուց ցարդ, բոլոր ռազմագէտներն, քաղաքագէտներն և նախագահներն եղած են ընդհանրապէս քաղաքացի, ուսեալ, գրագէտ և իմաստուն անձինք և նոյն իսկ են և այժմ.....:

Մի պարզ, անուս, անգրագէտ նահապետ էր Հայկ-Դյուցազն, որն հաւաքեց իւր որդիքը ու թռնները, խորհելով կարգադրեց թէ ինչպէս յաղթելու էր թշնամուն: Միթէ տէրութիւն հաստատող և ահագին զօրք գումարող հսկայ և քաղաքականութիւն փոքր ի շատէ սովորած Բէլն չսպանուեցաւ այդ Դյուցազնից:

Մի պարզ, անուս, անգրագէտ ոմն էր Արամ Հայկազանն, միթէ չարա՞ւ ժողովներ, չնախագահե՞ց, չառաջացա՞ւ սորա օրով գեղեցիկ կարգադրութիւններ և քաղաքական կարգեր և կանոններ»[23],- այսպէս շարեշար հերքում է Լեոյին ու նրա փաստարկները Մակար վարդապետը ու ձգտում ցույց տալու «Գաղտնիքի» մեջ իշխող պատմականութեան եւ ոչ թէ՛ վիպականութեան ոգին: Նա անտեղի եւ ավելորդ հարցեր ու առարկություններ է համարում Լեոյի հետամտումները, որին անհասկանալի են պարսից արյունաբերու շահերի, խաների ձգտումները, որոնք մահացու կերպով մղվում են կործանելու Ղարաբաղի խաներին. «Ազգաց պատմություններն ապացուցանում են, որ մարդկութեան մէջ այդպիսի երեւոյթներն յառաջացած են քաղաքական շահերից, նորահաստատ կառավարությունները ամրապնդելու հետամտութիւնից, ....Ի՞նչ պատճառաւ մի աւուր մէջ, Մովսիսի հրամանաւ, սրախողխող կոտորուեցան 24000 հրէաներ նոյն իսկ իւրեանց հաւատակից Հրէաներից:.... Ի՞նչ պատճառաւ, նահատակուեցաւ Աղուանից կաթողիկոսութիւնն, որ ապրած էր 1400 տարուց աւելի, նոյնպէս և մէլիքական իշխանութիւններհ...Շահն ոչ եթէ «Մէլիք-Մէժումի ձեռքին խաղալիք էր դարձել», այլ զրգռուած էր սորանից և Զաւաւտ-խանից: Այդ իրողութիւնը հաստատում է և Եաղուբ խանն.....»:

Սեկնաբանը հավաստի պատմական փաստերով հերքումի մի հետաքրքիր տեսություն է զարգացնում, որն այսօր էլ՝ հարյուրամյա հեռավորությունից, չի կորցրել յուր

մտածումի խորը տրամաբանությունը՝ պատմության փիլիսոփայության ինքնատիպ բացահայտումներով. «Շահն հետապնդում էր ջնջել Իբրահիմի խանութիւնը ոչ եթէ յօգուտ Արցախի Հայոց և ի շնորհս Մելիք-Մեծլումին, այլ յօգուտ Պարսկաստանի Գահին, ի շնորհս-յապահովութիւն իւր Շահութեան և ներքին խաղաղութեան:

Շահն քաջ գիտէր որ այդ «ձըռ-խաներն» Պարսից գահակալների դէմ միշտ ապստամբած և նոցա դէմ Շոշու դռները փակած էին, ինչպէս իւր դէմ, նոյնպէս և իւր հայր Աղա-Մամատ-Հասան կամ Հիւսեյին-խանի և Ուրմեցի Ֆաթալի-խանին դէմ: Շահն հետապնդում էր գործ դնել այդ քաղաքականութիւնը, որպէս զի միանգամ ընդ միշտ վերջ տար այդ անկարգութեանց, Մելիք-Մեծլումի սրտի հետ իւր կողմն գրաւէր և Արցախի միւս մէլիքների, զօրքերի, հասարակութեան և Աղուանից կաթողիկոսի սրտերը ևս, որք սառած էին մանաւանդ այդ «ձըռերի անկարգութեանց պատճառաւ Պարսկաստանի սրտից և հակուած դէպի Ռուսաստանի սիրտն» [24]:

Յավալի է, Լեոն գտնում է, որ զուր է «Գաղտնիքում» գործածված «քաղաքական» բառը, որ այն ժամանակներում դեռեւս գոյություն չունէր: Սակայն Բարխուդարյանը, ժխտելով այն, Լեոյին հիշեցնում է Պլատոնի «Պետություն» երկում բառի գործածված լինելու փաստը, ապա վկայակոչում է հաջորդին՝ Արիստոտելին, ու բառի Եվրոպական մշակույթում գոյություն ունենալու փաստը [25], պատմիչների, թարգմանիչների, աշխարհիկ եւ հոգեւոր գործիչների, Ն. Աշտարակեցու եւ այլոց կողմից բառի գործածությունները: Ինչպէս ցանկացած, նույնպէս եւ «Գաղտնիքի» մեջ եղել եւ կլինեն այլապարզ սխալներ, վրիպումներ, որոնց մասին նշում է Բարխուդարյանը եւ որոնք, սակայն, զգալի քանակ չեն կազմում: Բարխուդարյանը սպառնիչ պատասխաններով ցույց է տալիս Լեոյի կողմից թույլ տրված որոշակի սխալներ: «Ազնի մարդիկ հեռի են բծախնդրութիւնից: Եթէ ամենաթեթև ակնարկով անգամ նայելու լինինք պ. քննադատի տետրակին վերայ, կը գտնենք, ոչ միայն տպագրական, այլ և քերականական, աշխարհագրական և պատմական, բազմաթիւ սխալներ» [26]: Հեղինակը թվարկում է դրանք եւ նմանատիպ պնդումները օրինակներով հաստատում...

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մակար Վ. Բարխուդարեանց, Քննադատութիւն քննադատութեանց, Տփլիս, 1907:
2. Տպարան Մ. Դ. Ռօտինեանի, 1888 (այսուհետեւ՝ Մակար Վ. Բարխուդարեանց), էջ 3:
3. Նույն տեղում, էջ 4:
4. Նույն տեղում, էջ 4:
5. Նույն տեղում, էջ 4:
6. Նույն տեղում, էջ 5:
7. Նույն տեղում, էջ 5-6:
8. Նույն տեղում, էջ 6-7:
9. Տե՛ս նույն տեղում, էջ 7-10:
10. Նույն տեղում, էջ 11:
11. Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:
12. Լէօ, Վէ՞պ թէ պատմութիւն, Շուշի, Տպարան Հայոց Հոգեւոր Տեսչութեան, 1887
13. (այսուհետեւ՝ Լէօ), էջ 11-12:
13. Նույն տեղում, էջ 12-13:
14. Նույն տեղում, էջ 13-14:
15. Նույն տեղում, էջ 13-14:

16. Լէօ, էջ 15:
17. Տե՛ս Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 16-22:
18. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 25:
19. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 24:
20. Լէօ, էջ 17:
21. Տե՛ս նույն տեղում, էջ 25-29:
22. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 27:
23. Նույն տեղում, էջ 29:
24. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 29-30:
25. Նույն տեղում, էջ 30-32:
26. Տե՛ս նույն տեղում, էջ 32-34:
27. Նույն տեղում էջ 35:

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

#### Մակար Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը Զինաիդա Բալայան

1886թ. Սանկտ Պետերբուրգում Մակար վարդապետ Բարխուդարյանի թարգմանությամբ (գրաբարից աշխարհաբար), Առաքել աղա Ծատուրյանի մեկենասությամբ հրատարակվել է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության շուրջ պարբերական մամուլում լույս են տեսել դրական եւ բացասական կարծիքներ, գնահատումներ, գրախոսություններ, հրատարակվել են ուսումնասիրություններ (Րաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Լեո, «Վէ՞պ թէ պատմութիւն», Ս. Բարխուդարյան, «Քննադատութիւն քննադատութեանց»): Վերջնական արդյունքում աշխատությունը ամբողջությամբ արժեքազրկվել եւ մերժվել է:

Ս. Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը պատասխանում է այդ պոլեմիկական հարցերին:

Այս տեսանկյունից ուսումնասիրվող նյութը ձեռք է բերում գիտական արդիական հնչողություն կատարված գրաքննադատական վերլուծական նոր համակարգի՝ մեկնաբանական (հերմենեւտիկ) եւ արժեքաբանական (աքսիոլոգիական) քննումների զուգորդմամբ:

### РЕЗЮМЕ

#### Книга Макара Бархударяна “Критика критики” Зинаида Балаян

*Ключевые слова:* 1886г., грабар, современный армянский язык, рецензии, “Тайна Карабаха”, историческое исследование, Лео, “Роман или история?”, герменевтический, аксиологический

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с грабара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела-ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Апреса “Тайна Карабаха”.

Вокруг этой книги в периодической печати вышли отрицательные и положительные отзывы-оценки, рецензии, а также были опубликованы исследования (Раффи “Тайна

Карабах», Лео «Роман или история?», Макар Бархударян «Критика критики»). В конечном итоге это исследование целиком было обесценено и отвергнуто. Книга Макара Бархударяна «Критика критики» отвечает на эти полемические вопросы. С этой точки зрения, исследуемый материал приобретает современное и научное звучание. Он выполнен в русле современной критико-аналитической (герменевтической) и оценочной (аксиологической) новой системы.

## SUMMARY

### Makar Barkhudaryan's "Criticism of Critique"

Zinaida Balayan

**Keywords:** 1886, Grabar, Modern Armenian, reviews, the "Mystery of Karabakh", historical investigation, Leo's "A Novel or History", hermeneutic, axiological.

Historical investigation of the "Mystery of Karabakh" by Apres Begnazaryan (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published in St. Petersburg, in 1886 under the patronage of Arakel-aga Tsaturyan. There were negative and positive references and reviews about this book in periodical press. Researches like Raffi's the "Mystery of Karabakh" and Leo's "A Novel or History", M.Barkhudaryan's "Criticism of Critique" were also published. However, finally the investigation was depreciated and completely rejected.

Makar Barkhudaryan's "Criticism of Critique" answers these polemical questions. Thus, from this point of view the investigated material provides modern and scientific touch. It is carried out in the framework of a new critical-analytical (hermeneutic) and estimative (axiological) system.